

## I. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ\*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ<sup>29</sup> ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ,  
ՈՐ ԼՈՒՍՎՈՐԾ<sup>30</sup> ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՌԵՎԵՐԻ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ  
ԿՈՍՊԱՅՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՐՁՈՒՑ ԴԵՊԻ ՃԵՄԱՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ  
ԽՍ.2Ի ՊԱՅՏԱՄՈՒՆՔԸ

1. Հայաստանում կար Սահատրուկ<sup>31</sup> ա-  
նունվ մի թագավոր, որը Քրիստոսին նա-  
մակ գրող Ռուբենի Արգար թագավորի  
քեռորդին էր: Ասում են, որ նա Դավիթ  
արքայի ու մարգարեի ցեղից էր: Այստեղից  
էլ Հայաստանի բոյոր թագավորները Դավ-  
թի տնից են համարվում:

2. Հայոց այս թագավորի՝ Սահատրուկի  
օրոք հայտնվեց<sup>32</sup> Ղնին, որի մականունն  
էր Թաղեսու, այսինքն՝ Սղոց<sup>33</sup>, և նրանց  
քարոզեց հայլատի խոսքը: Սահատրուկը՝  
Արգար թագավորի քեռորդին, շնորհեց  
նրան:

3. Լսելով այդ՝ հայոց հայարարները<sup>34</sup>  
հավաքեցին եկան նրա մոտ ու ասացին  
նրան: «Քեզ վայել չեւ լեզ քո նախնիների  
ասուլածներին»: Նա էլ կատարեց նրանց  
կամքը և վերադարձավ իր նախնին մոլո-

\* Ծարուակված «Եջմիածին» ամսագրի 1987  
թվականի № № ԺԱ-ԺԲ-ից:

<sup>29</sup> Բնագրում՝ «դարձալ պատություն» (twis  
չչու): Աստրական ձեռագրերում «դարձալ» բառը  
հյուրերի հաջորդականությունն ընդգծվում մի եղա-  
նակ է և չի մտնում որևէ որոշակի բնագրի վեր-  
նագրի կազմի մեջ:

<sup>30</sup> Բնագրում՝ «ուսուցանեց (վարդապետեց)»  
(Uitdih):

<sup>31</sup> Բնագրում ՏՈՒՐԳ. Վերջին բաղաձայնի ձայնե-  
լացումը արդյունք է հայոց լեզվի արևմտյան բար-  
բառների արտասանության:

<sup>32</sup> Բնագրում՝ «եկավ» (t'':

<sup>33</sup> Թաղեսու առաքյալի աստրական անվանաձևը  
(dy):

<sup>34</sup> Բնագրում՝ «թագավորները» (milky):

բությամբ:

4. Բով Արդեին բարձրացրին մի բլոր,  
որտեղ և նա սպանվեց նրանց ձեռքով ու  
թալլվեց հավատացյալ մարդկանց կողմից:  
Ծառ ժամանակ անց Սահատրուկը մահա-  
ցավ: Նրանից հետո թագավորեց Արտա-  
շեսը<sup>35</sup>, որը նույնական մահացավ:

5. Նրանից հետո թագավորեց Խոսրո-  
վը<sup>36</sup>, մի հզոր և դաժան մարդ: Սա հայտեց  
բազում թագավորների և կոտորեց նրանց,  
ժառանգերով նաև նրանց հողերը: Նրանից  
սարսափում էր նույնակ Թալիրիզի<sup>37</sup> պար-  
թևազուն<sup>38</sup> մեծ արքան, որը նրան թագա-  
վոր էր կարգեց:

6. Խոսրովն ուներ Անակ<sup>39</sup> անունվ մի  
եղբայր: Այս Անակը դիմեց Թալիրիզի ար-  
քային, անելով. «Մի վախենա իմ եղբորից,  
քանզի եթե դու կամենա, ես կգնամ ու  
կսպանեմ նրան խորամանկությամբ»:

7. Այս բանը լսելով՝ Թալիրիզի մեծ ար-  
քան անշափ որպահացավ ու նրան ճանա-  
պարհ դրեց: Անակը շարժվեց իր ողջ զոր-  
քի, կանանց, որդիների ու բոլոր տնեցի-  
ների ուղեկցությամբ և ճանապարհ ընկավ՝  
եղբոր մոտ գնալու համար:

<sup>35</sup> Բնագրում՝ ԵԽՆԾ. Բնմտ. M. van Esbroeck, Առ  
պուռաւ տեղուն, թ. 101.

<sup>36</sup> Բնագրում՝ ԿՏՐՈՒ. Բնմտ. անդ, էջ 103:

<sup>37</sup> Բնագրում՝ ԵՐԱՅ. Բնարավոր է որոշ աղավա-  
լում:

<sup>38</sup> Բնագրում՝ աղավալված ելե՛ն ա՛լե՛ն. Հայ  
Մ. վաս Էսբրուկի՝ սա նայերեն «Պահլաւ և եղ-  
բառը» բառերի տառապարհությունն է:

<sup>39</sup> Բնագրում՝ Պ. Վերջին բաղաձայնի մասին  
տե՛ս ծանօթ. 81:

8. Երբ նա հասավ մի քաղաքի, նրա քանակը դադար առավ այնտեղ: Խոկ ինքը բարձրացավ այն բլուրը, որտեղ պսակի էր արծանացել Սորեն առաջյալը, և այդ գիշեր ննոց իր կոնց նետ: Վերջինս հղացավ նրանից այս Գրիգորին, որը լուսավորեց<sup>40</sup> ողջ Հայաստան:

9. Դրանից հետո, երբ նա հասավ Դվիխ<sup>41</sup> քաղաքը և այդ մասին լսեց նրա եղբայր Խոսրովը, մեծ զորքով եղավ նրան ընդառնաց ու, որախութամբ ընդունելով նրան, ասաց. «Ահա ես կործանեցի քաղում թագավորութերի ու ժառանձեցի նրանց երկրները: Նստիր, արդ, ինձ մոտ, որպեսզի լինես իմ աշակիցն այս թագավորութան մեջ»:

10. Անակն իր հերթին նրան ասաց. «Հենց նրա համար եմ եկել, որպեսզի մեր խոսք մեկ լինի և մենք նվաճենք ողջ աշխարհը»: Եվ Խոսրովը նրան իշխան կարգեց իր ողջ ուսեցվածքի վրա, և այդ ձմեռ նրանք անցկացրին փոխադարձ որախութամբ ու կերպուտումով:

11. Երբ եկավ ամառը, աճեց խոտը, և անաստեներն ապահովվեցին կերով ու օրերը տաքացան, Խոսրովը հավաքեց իր ողջ քանակը՝ Թավիրիգի մեծ արքայի հետ պատերազմելու համար:

12. Խոկ Անակը՝ նրա եղբայրը, մտածում էր, թե ինչ հնար գտնի սպանելու նրան, ինչպես խոստացել էր Թավիրիգի մեծ արքային:

13. Երբ Խոսրովը մեծաթիվ զորաբանակներ հավաքեց, նրանք ճամբար դրին մի մեծ և ընդարձակ դաշտում, Դվիխի դիմաց: Մի օր, մինչ Խոսրով և Անակ եղբայրները շրջում էին դաշտում ու խորհրդակցում ինչինչ գործերի մասին և բավկանին հեռացել էին ճամբարից, Անակը, որը թաքու<sup>42</sup> սուր էր կրում, սրով հարվածեց Խոսրովին ու յողեց ընկած, կարծելով, թե մեռած է:

14. Երբ նրա ծառաները եկան ու տեսան նրան, պարզեց, որ նրա մեջ դեռևս շունչ կա: Եվ նա ասաց նրանց. «Սարսեցեք իմ եղբորն ու նրա տան բոլոր անդամներին<sup>43</sup>, ինչպես նաև նրա հետ եղող բոլոր ուսպիշկներին»:

15. Հետապնդելով և հասնելով նրան Դվիխի դաշտի գետի մոտ, նրանք խեղդե-

ցին նրան այդ գետում ու կոտորեցին նրա տան անդամներին:

16. Խոկ Գրիգորի՝ այս Անակի որդու դայակը, դեռևս երկու ամսական Գրիգորին նետեց իր ծոցը և, վրկելով նրան կոտորածից, փախավ Հունաց երկիրը:

17. Նա բնակություն հաստատեց Նեղանարիա քաղաքում և այնտեղ էլ բրիտանական դարձավ: Գրիգորին նաև դաստիարակեց Աստու երկրուղով և Սորը Գրիգ նկարցանությամբ:

18. Խոկ մինչ այդ, ևելով Խոսրովի սպանության մասին, Թավիրիգի մեծ արքան անչափ որախացավ և մեծաթիվ զորք հաւաքած շարժվեց դեպի Դվիխ: Նա կոռուց Խոսրովի տան բոլոր անդամներին ու նրա բոլոր մեծամեծներին և գրավեց նրա երկիրը:

19. Խոսրովն ուներ երեք տարեկան մի որդի, որը կոչվում էր Տրդատ<sup>44</sup>: Նրան էլ իր դայակը փախցրեց Հունաց երկիրը, Լիկիանու բռնակալի մոտ, ծանուցելով նրան, որ Հայոց արքայի որդին է: Նա մեծ պատվի արծանացրեց նրան, և նա զորեղ ու հմլայազուն մասով դարձավ:

20. Երբ սրա հորեղբորորդին՝ Գրիգորը, տանմինգ տարեկան դարձավ, նրա դայակը նրան կին առավ: Եվ նա նրանից մի որդի ծնեց, որին կոչեց Վրթանես անունով: Ծնեց նաև մեկ ուրիշը, որին անվանեց Շտանկես<sup>45</sup>: Ասպա Գրիգորը հարցրեց իր դայակին, թե ովքեր են իր ծնողները:

21. Այնձամ նա պատմեց նրա ծնողների ողջ պատմությունը, թե ինչպես նրա հայրը սպանեց իր եղբորը և ինչպես սպանվեց ինքը, նաև՝ նրա հորեղբորորդի Տրդատի մասին, որն ազատվեց և գտնվում է Լիկիանու բռնակալի մոտ:

22. Ասպա Գրիգորը կանչեց իր կոնջը և նրան երկարորեն ճորդորեց, որպեսզի իր ենք լրեն աշխարհը և ապրեն սրբությամբ: Եվ նա համաձայնեց դրան:

23. Այնունետև յողեց նրան ու իր որդիներին և գնաց տեղեկանապու իր հորեղբորորդու մասին, որպեսզի նրան ծառապություն մատուցի նրա նոր արյան դիմաց, որին սպանել էր Անակը՝ Գրիգորի հայրը:

24. Դրանից ի վեր, գտնվելով նրա մոտ, նա Աստու երկրուղով, ողջ սրտով և անտրություն մեծ ծառապություն էր մատուցում

<sup>40</sup> Տի՞ս ծանոթ. Յու:

<sup>41</sup> Բնագրում ենց. Դվիխի արարական անվանաւուն է հնար. M. van Esbroeck, Սու ուսուես տեմուն. p. 15.

<sup>42</sup> Բնագրում վրիպմամբ տպագրված է ուսից փիլ մէջ:

<sup>43</sup> Բնագրում «որդիներին» (Ենոյ):

<sup>44</sup> Տրդատ անունը ատրական բնագրում տառապանակ է նետկալ ձևով. Եթէ, Եթէ Եթէ.

<sup>45</sup> Բնագրում վրիպմամբ տպագրված է աւստ'օւս փիլ բատ'կան:

նրան: Եվ Տրդատը շափազանց զարմանում էր Գրիգորի վրա:

25. Մի օր նա կանչեց Գրիգորին և ասաց նրան. «Քո ծառայությունն ու հնագանդությունը շատ վայելու են, սակայն դու մի թերություն ունեն, որ չես երկրպագում աստվածներին: Եվ եթե կատարյալ լինելու համար անես նաև այլ բանը՝ երկրպագես աստվածներին, ես քեզ կկարգեմ իմ ողջ ունեցվածքի վրա, և դու կդատնանա իմ փիխանորդը»:

26. Գրիգորին ասաց նրան. «Ես ձեռագործներին չեմ երկրպագի, քամի որ նրանցից շահ չկա, և նրանք նույնիսկ իրենց չեն կարող օգնել: Արդ, ես ծառայում եմ քեզ և իմ վարձն ատանում Աստծոց, որն ըստեղծել է երկինքն ու երկիրը և նրանցում եղած ամեն ինչ, որին էլ հենց երկրպագում եմ»:

27. Տրդատը շատ ջանք թափեց Գրիգորի վրա, բայց չկարողանալով համոզել, ձեռք քաշեց նրանից:

28. Այդ ժամանակ կար մի դաժան բըռնակալ, հնարավորին շափ հնկայական ուժով, որը պատերազմի մեջ էր Դիոկլետիանոսի հետ: Վատահ լինելով իր ուժի վրա, նա Դիոկլետիանոսին հղեց հետևյալը.

29. «Մենք չենք ցանկանում, որ մեր բանակները մարտնչեն իրար հետ, և մեր միջև արյունաթեղություն լինի: Այլ հանդիպենք իրար ես ու դու, և ով սպանի իր մըրցակի՞ն<sup>46</sup>, թող նրան պատկանի ողջ թագավորությունը»:

30. Երբ սուրբանդակը հասավ Դիոկլետիանոսի մոտ, սա նրան պահեց իր կողքին<sup>47</sup> և իր ողջ տերությանը հրահանգեց զորք հավաքել և գալ իր մոտ:

31. Այնուհետև լիկիանոսը, որի մոտ էր գտնվում Գրիգորի հորեղբորորդի Տրդատը, բազմաքանակ զորք հավաքեց՝ մոտ հինգ հազար, և Տրդատին հետը վերցրած գնաց: Գիշերամուտին նրանք հասան Դիոկլետիանոսի քաղաքը:

32. Եվ կեր փնտրեցին իրենց գրաստների համար, բայց ոչինչ չգտան, քանի որ դարպասները փակ էին: Այնամ Տրդատը, հայացքն ուղղելով քաղաքի բարձրաբերձ աշտարակներից մեջին, վերցրեց մի երկար

<sup>46</sup> Բնագրում «իր ընկերուշը» (Խերի). Ստորենում այս կառուցվածքն ունի «մյուա» անորոշ դրանքան հմասս (հնապես, օրինակ, «այլ ընդ ընկերի խորու») հշանակում է «մեկը մյուին»:

<sup>47</sup> Բնագրում լուի (նրա մոտ). «մոտ» բառը նույն անգամ նույն նախադասության մեջ չկրկնվում համար, այստեղ թարգմանել ենք «կողքին»:

պարան, նրա ծայրին երկային կեռ ամրացրեց և նետեց դեպի աշտարակի գագաթը:

33. Մագլեց քաղաքի ներսը և այդ աշտարակի մեջ գտավ բազմաքանակ գրաստներ ու իսրողի խրձեր, որ կուտակված էին այնտեղ անասուններին կերակրելու համար:

34. Տրդատը, որ դեռևս քանի տարին չեր լուսցրել, մի այնպիսի հնկայական ուժ ուներ, որ անհնար է նկարագրել: Այսպես, նա գրկեց մի ավանդակ, նրան դրեց հարդի խրձերի արանքը և նետեց ցած, դեպի բանակատեղին:

35. Այդպես նա կեր նետեց նրանց, մինչև որ բավականացրեց բոլորին, ապա իջավ: Դա արեց իր ուժը ցուց տպար համար: Լիկիանոսը և նրա ողջ բանակը անշափ զարմացան նրա վրա:

36. Երբ սաւավոր եղավ և դարպասները բացվեցին, լիկիանոս իր զորքի հետ մըրտավ քաղաք ու գնաց Դիոկլետիանոսի մոտ:

37. Տեսմելով, որ նրա դեմքը տխուր է և վշտացած, դիմեց նրան ու ասաց. «Ինչ այտանով է արքան այդպես տրտմած»:

38. Դիոկլետիանոս ասաց նրան. «Այսինչ ապատամք բռնակալը ինձ լուր է ուղարկել, ասելով, թե չենք ցանկանում, որ մեր միջև արյունաթեղություն լինի, այլ հանդիպենք իրար ես ու դու, և ով ընկճի իր մըրցակի՞ն<sup>48</sup>, թող նրան պատկանի ողջ թագավորությունը: Դակ ես գիտեմ, որ նա հնկայագոր և պատերազմակը մարդ է»:

39. Արքան ասաց նրան. «Մի՛ տրտմիր դրա համար, քանզի ինձ հետ է մի զորեղ պատամի՛ Հայոց թագավոր Խոսրովի որդի Տրդատը, որի նմանը ես երեք չեմ տեսել: Ժամանելով երեկոյան և դարպասները փակ գտնելով, մենք մնացինք դրսում: Մենք ոչինչ չունեինք գրաստներին կերակրելու համար:

40. Այս Տրդատն էր, որ մագլեց քաղաք և գրաստները ու հարդ գտավ: Նա գըրկեց մի ավանակ, կապեց հարդի խրձերին և իր հնկայական ուժով նետեց մեզ, կըրտացնելով ողջ ճամբարը: Արդ կեր, խմիր և զվարճացիր, քանզի սա կկործանի բըռնակային»:

41. Դիոկլետիանոսը զարմացավ լածի վրա, կանչել տվեց Տրդատին ու պատմեց նրան այլ բռնակալի մասին: Տրդատը դիմեց նրան ու ասաց. «Մի՛ տրտմիր, տեր իմ աթքա, այլ միայն խոստացիր ինձ, որ երբ հաղթեմ նրան, ինձ զորք տաս, որպես-

զի ես նվաճեմ իմ նախնիների թագավորությունը»: Եվ արքան խոստացավ նրան կատարել այդ բանը:

42. Ապա Դիոկղետիանոսը ետ ողարկեց այն բռնակալի սուրբանդակին ու ասաց նրան. «Պատրաստվիր, որպեսզի հանդիպենք իրար պատերազմում»:

43. Այնուհետև, երբ եղան կովի և մարտակարգերը դասավորվեցին, Տրդատին հագցրին Դիոկղետիանոսի հանդերձները, որը նրա գլխին դրեց նաև իր թագը ու նրա վրա կապեց իր գենքուրահը, հեծցնելով արքայական նժողովին:

44. Բռնակալը ձայն տվեց և ասաց. «Թող մեր մարտակարգերը շմարտնեն իրար հետ, այլ միայն ես և դու մարտընչենք, և ով հաղթի մեզանից, թող նրան պատկանի թագավորությունը»:

45. Տրդատը, արքայական հանդերձանքով ու գենքուրահով և արքայական թագը դրած գլխին, եղավ նրա դեմ ու ասաց. «Սիս ես»:

46. Այնժամ բռնակալը փորձեց հարվածել Տրդատին գեղարդով և նրան ցած գցել նժողովից: Տրդատը, թուրը բռնած ձեռքը, խոյացավ բռնակալի վրա, նրան գցեց նժողովից ու, ձեռքով բարձրացնելով նրան, բերեց Դիոկղետիանոսի մոտ: Խակ նրա նժողովը վերադարձավ իր ճամբարը:

47. Դիոկղետիանոսն, իր մեծամեծների հետ, շատ ուրախացավ և նվաճեց այդ բռնակալի թագավորությունը: Դիոկղետիանոսը թագադրեց Տրդատին, նրան բազմաքանակ զորք տվեց և ուղարկեց իր երկիրը, որպեսզի նվաճի իր հայրերի թագավորությունը:

48. Գրիգորը նոյնպես գնաց նրա հետ: Երբ Տրդատը հասավ Եփրատ գետին, հանդիպեց քոչվորների<sup>49</sup>, որոնք գտնվում էին այնտեղ, և նրանց բոլորին կոտորեց: Նա անցավ Կղեսորի<sup>50</sup> երկրով և ամրացրեց այն: Խակ այնտեղից մտավ իր հայրերի երկիրը:

49. Տեսնելով նրանց կոտքերը, երկրպահեց նրանց ու մեծամեծ զորեր մատուցեց արձանաներին: Եվ նրանցից օգնություն խնդրեց, ասելով. «Քանի որ իմ հայրերն

<sup>49</sup> Բնագրում՝ ԵՀԿ, որ քարշումն թարգմանության մեջ վերարտադրված է՝ Մշտ (արաբներ) բառով:

<sup>50</sup> Հայաստանի սահմաններում Կղեսորը անունով մի քանի լնոնանցքներ և ամրոցներ են հիշատակվում (տե՛ս Ս. Երեմիան, Հայաստանը ըստ «Աշխարհացողի», Երևան, 1968, էջ 59): Ս. վաս Էսքրոլի կարծիքով՝ ասորական խմբագրության հեղինակը նկատի ունի Դերջանի լնոնանցքը (տե՛ս Մ. van Esbroeck, Առ պուռաւ էմուու, թ. 109):

անտեսեցին ձեզ, դուք երես դարձրիք<sup>51</sup> նրանցից: Սակայն խնդրում եմ ձեզ՝ օգնեք ինձ, ես էլ ձեզ մեծապես կպատվեմ»:

50. Եվ Գրիգորին հրամայեց երկրպահել կոտքերին: Գրիգորն ասաց նրան. «Ես չեմ թողնի Աստծուն<sup>52</sup>, որն ստեղծել է երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը, արեգակը, լուսինն ու աստերը, ծովերն ու գետերը, լեռներն ու բլուրները, անաստեները՝ չորստանիներն ու սողունները, միջատներն ու յոշունները»:

51. Որն ստեղծել է նաև մարդուն իր պատկերի համեմատ և նրան իշխան կարգել այդ բոլորի վրա, որն ստեղծել է նաև նրանց, ովքեր տեսանելի են կամ աներեւություն, և [չեմ] երկրպահի մարդկանց ձեռքով ստեղծված արձաններին, որոնք ոչ պատիս են զգում, և ոչ ծաղրամեք»:

52. Տրդատը թեև շատ համոզեց նրան, բայց [երբ] նա չանաց, դիմեց նրան ու ասաց. «Առաջնորդության և թագավորության փոխարեն, որ ուզում էի քեզ շնորհել, այժմ քեզ կմատնեն չարաշար կորստրան»:

53. Այնուհետև անօրենը հրամայեց աղբերել՝ մոտ երեք քեռ, որը բարձեցին ու կապեցին նրա վրա և գլխիվայր կախեցին նրան, իսկ տակը աղը լորին: Ալդպես նա մնաց յոթ օր, որից հետո հրամայեց իշեցնել նրան:

54. Եվ Տրդատը դիմեց նրան ու ասաց. «Ուր է երկինքն ու երկիրն ստեղծող քո Աստվածը, որ չազատեց քեզ այս տանշանքից»:

55. Գրիգոր նահատակ<sup>53</sup> ասաց նրան. «Աստվածն իմ երկներում է: Նա անում է այն ամենը, ինչ ցանկանում է: Իշխում է ողջերի ու մեռյալների վրա, և նա կարող է ինձ ազատել քո ձեռքերից»:

56. Տրդատը զարյացավ, և անօրենը հրամայեց կախել նրան գլխիվայր: Նրա տակ մի ձագար դրին և վրան ջուր շաղեց:

<sup>51</sup> Երես դարձրիք. բնագրում՝ 'սույւո, որը թերևս տպագրական վրիպակ է և պետք է ուղղել 'հոյւտո.

<sup>52</sup> Բնագրում Ս. վաս Էսքրոլի կողմից ընթերցված է՝ 'Ի', որը թերևս պետք է ուղղել 'Ի'.

<sup>53</sup> Բնագրում՝ ոչ չչ (փառանուղ, հայտական, նոչակալող). այս բառը Գրիգոր Լուսավորչի նահատակ (մարտին, ըմբիշ—չուշչուշի): մականվան ասորերեն խարգմանառությունն է (հմմտ. Ղազար Փարպեշի, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխաչյան, Տփոխ, 1904, էջ 17, 26, 28 և այլն): Բնագրի ոճը պահպանվում նամար խարգմանառության մեջ նախընտրել և եթ գրարարան նահատակ բառը:

ցին, մինչև որ նա ուսավ: Յոյժ մարդ կարգեց նրա վրա, որպեսզի ծեծեն նրան և չոր շաղ տան, և նրանք ծեծեցին նրան: Այդաւե նա մնաց երեք օր, որից հետո իշեցնել տվեց նրան:

57. Ու դիմեց նրան և ասաց. «Ո՞ւ է ք Աստվածը, որ չկարողացավ ազատել քեզ իմ ձեռքերից»: Քրիստոփի վկան նրան ասաց. «Տես, այս բոլոր տաճաշաճներով հանդերձ, որոնցով ինձ չարչարեցիր, նա թույլ չտվեց, որ ես մեռնեմ»:

58. Եվ որքան սաստիկ հանդիմանեց նրան, նա տեղի չտվեց: Հրամայեց քերել մի անոթ, որի մեջ կրակի կայձեր լցրին, դրին նրա գլխին ու ամրացրին վրան: Այդպես նա մնաց յոթ օր, որից հետո հրամայեց իշեցնել այն:

59. Դարձյալ բազմիցս հորդորեց, բայց նա չհնազանդվեց նրան: Եվ հրամայեց դաժանորեն ճգմել նրան, մինչև որ նրա ուկորները փշովնեն: Երեք մարդ կարգեց նրա վրա, որպեսզի ծեծեն նրան: Եվ այդպես նա մնաց յոթ օր:

60. Դրանից հետո քերեն սափիրիչի ածելիի պես սրված մի երկաթ և քերեցին նրա գլուխ ու մարմինը: Կրակի մեջ արճին հալեցրին և ցողեցին նրա վրա: Հետո Քրիստոփի վկան՝ տեր<sup>54</sup> Գրիգոր նահատակը, գլխիվայր կախված, աղոթք մատուցեց, ասելով.

61. «Տեր Աստված ամենակայ, գթացող և ողորմած, հայոցություն տուր ինձ և ողորմիր քո ողջ ծողովորդին: Լուսավորիր այս մարդկանց մտքի աշքերը, որպեսզի նրանք գիտենան, որ դու ես միակ ճշմարդին Աստված»:

62. Խակ Տրդատը հրամայեց իշեցնել նրան, դիմեց նրան ու ասաց. «Ես չեմ տեսնում, որ քո Աստվածը, որին դու սիրում ես, որևէ բանով քեզ օգնեց»:

63. Քրիստոփի վկան նրան ասաց. «Աստված իմ երկայնամիտ ե, ի բարությամբ և ճշմարտությամբ: Նա մեղավորներին մասի չի ցանկանում»<sup>55</sup>: Նա էր, որ ինձ ուժ տվեց դիմանալու քո այս խոշտանգումներին, որպեսզի դրանցով դու գիտենան, որ նա ամենակարող է: Արդ, վախեցիր նրանից և դրանից առ նա»:

64. Այնուհետև Տրդատը զայրացավ և հրամայեց ծալել նրա ծննդերն ու դնել երկաթյա ուտնակապերի մեջ, դրանք միացնել<sup>56</sup> իրար և ամոնել գամերով, ձեռքերի ու

ոտքերի վրա երկարթներ, իսկ պարանոցին մի մեծ քար դնել և կախել գլխիվայր: Նրա հետ աղյուս վարվեցին յոթ օր:

65. Դրանից հետո նրան իշեցրին և երկաթյա փշեր պատրաստեցին: Քրիստոփի վկանին գորեցին դրանց վրա, և նրանք պատառտեցին նրա մարմինը: Նրա արյունը հուսեց գետնի վրա:

66. Արդ բոլոր խոշտանգումների ընթացքում նրա ոգին զրել մնաց: Նա գովերգում էր Աստծոն և աղոթում իր հայածիշների համար, որպեսզի նրանք ընթանան ճշմարտության ճանապարհով, դարձի զան և փրկվեն:

67. Տրդատը կանչեց նրան ու ասաց. «Ո՞ւ է ք Աստվածը: Ահա ես քեզ տանձեցի, բայց նա չկարողացավ քեզ օգնել և փրկել իմ ձեռքերից»:

68. Ծշմարդիտ վկան՝ տեղ Գրիգոր նահատակը, նրան ասաց. «Աստվածն իմ միշտ ինձ հետ է և օգնում է ինձ: Նա նցոր է և ողորմած: Իր ողորմածությամբ նա ինձ ուժ տվեց քո այս բոլոր խոշտանգումների դեմ, որոնց ինձ ենթարկեցիր, որպեսզի դու ճանաչես նրան և գովարանությամբ դառնաս առ նա: Խակ ինձ հարության ժամանակ նա քերկրանքի կարծանացնի իր երկնային արքայության մեջ: Եվ եթե դու շնչառնաս առ նա, քեզ կտանչի դժոխքում դների հետ, որոնց դու պաշտում ես»:

69. Եվ մինչ նա խոսում էր, [խագավորի] մեծամեծներից մեկը դիմեց նրան ու ասաց. «Ենչո՞ւ ես արդակն վարվում այս պատամիք հետ: Նա որդին է ք հորեղբոր՝ Անակի, որն սպանեց քո հորը և կործանեց ողջ Հայաստանը: Նա արծանի չէ ապրելու», — սրբին նա գիտեր նրա դայակի միջոցով:

70. Այնժամ Տրդատը պաշեց ու զարմացավ և հրամայեց նրա ձեռքերն ու ոտքերը պնդել կապանքների մեջ, զգին անոր դնել և նետել վիրապը<sup>57</sup>: Այդպես էլ արեցին և նրան նետեցին վիրապը, որի խորությունը չորս հիգակի երկարության չափ էր:

71. Այն լցված էր բազում սողուն կենդանիներով, օձերով ու տղմով: Եթր թագավորը թշնամանում էր մեկի հետ, նրան նետում էին այնտեղ: Եվ հրամայեց նրան նետել այդ վիրապը, որտեղ նա մնաց տասնինգ տարի:

Եթի բարարաններում Ճող բաղաձայներից կազմական արքային բայ գտնել, ուստի թագմանում ենք ըստ Մ. վաճ Էսքրոլի վերծանության:

54 «Տեր» (ուր) բառը Մ. վաճ Էսքրոլի ֆրամակերն թարգմանության մեջ բայ է թողված:

55 Հմտություն. Եզեկի. ԺԸ, 28, 32:

56 Բնագրում ուղղական. Մեզ չհաջողվեց ասորի-

57 Այս և նետագա դեպքերում վիրապ բախ դիմաց ասորերն ընագրում դրված է gwb' (=գոր) բառը:

72. Խոկ ողորմած և բարեգութեն Աստվածած, որը պատահանում է իր ծառաներին և չի անտեսում իր երկրպագուներին, Բորեխտակի միջոցով տեղեկացրեց մի այրի կնոջ, որպեսզի ամեն օր մի նկանալ<sup>58</sup> հաց նետի վիրապը: Եվ աստվածային հախախնամությամբ<sup>59</sup> տասնինգ տարի ևս արեց այդ բանը՝ ամեն օր նի նկանալ հաց նետեց վիրապը:

73. Դա էր սրբի կերպութը: Եվ Աստված նրան պահպանեց այդ կենդանիներից, ինչպես որ գրում փրկել էր Դանելին աղոյնձներից և նրան հայթանակ տվերդներից նրա թշնամիների նկատմամբ, ու այնուհետ եղած բոլոր մարդկանց դարձի քերեկ մոլորությունից:

74. Տրդատը տիրում էր իր հայրերի թագավորութանը և մեծապես հզորանում։ Իսկ Դիլկիստիանոսը հալածանք էր ակսել բրիստնեաների դեմ։

75. Օրերից մի օր նա մի կնոջ շատ գեղեցիկ պատկեր<sup>60</sup> տևավ և հրամայեց այդ պատկերի պատճենը վերարտադրել կուպի վրա, շրջել իր ողջ տերության մեջ, մինչև որ իր համար պատճենի նման մի կին գտնեն և գան հաղորդեն իրեն:

76. Դեսպանները փնտրեցին ու կանաց լամբում գտան մի կուսակրոն աղջևակ, որը կոչվում էր Հոփիսիմե<sup>61</sup> և արքայադուռը էր: Նրա հետ էր իր դաշնակը, որի անունն էր Գայանե<sup>62</sup>:

77. Կանոն կախն յոթանատունոր կրու-  
սավորութիւներ՝ անարատ և սուրբ կանայք:  
Դեսպանները գնացին տեղեկացնելու թա-  
գավորին: Իսկ երկնային թագավորի՝  
Քրիստոսի հարսնացուները<sup>63</sup>, մկանելով  
այդ, գլխույին ելան ու փախաճ Հայոց եր-  
կիրք:

<sup>58</sup> Բնագրում զլր՝, նոգնակի թվի Աշանոց (= Ականակներ). Տողնակիի Աշանոց, մեր կարծիքով, դրվագ է միապմամբ, քանի որ Ազգայանձևութիւն հաւելեն բնագրում խորը գտնում է օրական մեկ Ականակ նախ մասին (Բնագր. Առաջ. 124):

<sup>59</sup> Բնագրում վիրաբերակ տպագրված է հոմքերուն։

<sup>61</sup> Բանակում ինչպես այս, այնպես և նևուագ  
դապրություն կրապսym'. Բան.՝ M. van Esbroeck,  
Սուսառակ տեղուն. թ. 110.

<sup>62</sup> Բնագրում gy'yn', այլ դեպքերում նաև g'yyn'. հիմն, անը, էջ 106:

<sup>63</sup> Բնագրում՝ mkyrth. Մ. վաճ Էսքրոկը թարգմանելի է լուսաբառությունում:

78. Նրանք բաժանվեցին երկու մասին:  
Նրանցից քառասունը գնացին Դվիթյան<sup>64</sup>  
կողմերը և բնակվեցին մի ավերպած հրն-  
անալում, որպեսզի ոչ ոք իրենց ջանաչի,  
իսկ մյուսները գնացին Ավան<sup>65</sup>, Բերկին<sup>66</sup>  
քաղաքի մոտ, և հաստատվեցին Լեռնային  
մի քարայրում:

79. Դրանից հետո, եթիւ դեսպանները եկան ու Դիլկիստիանոսին տեղեկացրին Հոփիսիմէ կրոնավորուու մասին, առ շատուրախացավ, իրահանգեց քերել հրան, ու մեծ ցնծությամբ հարսանիքի ամենայն պատրաստություն տեսավ:

80. Έτι δέρε πηκυψαντάντερε την κανή της γαρ-  
τικής αρωμάτων, η οποία λέγεται ότι είναι το με-  
γαλύτερο αρωματικό στοιχείο στην Ελλάδα. Το  
αρώματο της γαρτικής αρωμάτων είναι το μεγαλύτερο  
στην Ελλάδα.

81. Նա նամակ գրեց Տրդատին, ողջուցից հետո երան ասելով. «Մենք շատ չպիքներ պատճառեցինք քրիստոնյաներին, մեր սրբը հոգնեցին երանց կոտրելուց, և երկիրը ողողվեց երանց արյամբ, բայց երանք քանի գնում աճում ու բազմանում էն: Խոկ երանց, որոնց մենք կոտրեցինք, երանք մեծ պատվով են ընկալում ու պաշտում են այն Աստծոն, որին խաչել են հուեաները:

82. Արդ, նրանցից ոմանք, որոնք կոչվում են կրոնավորութիւներ, չհավանելով մեր թագավորությունը, փախել և ապատան են գտել որ մոտ: Նրանց մեջ ես տեսել եմ մի գեղատես աղջնակ, որի նմանը չկա ողջ աշխարհում:

83. Τα ωνζωψι γενεψιαδ ևմ Արա պատկերից: Արդ, հրամակիր փնտրել Արան ողջ ըստ տերության մեջ: Եթե գտնեն Արան ու հավանեն, վերցրու Արան, իսկ եթե ոչ՝ ուղարկիր ինձ»:

84. Τις αγάπη ρωσίας διέτασε, έπειτα η Ελλάς  
υποτίθεται σε αγάπην, πι Σρητατιρή Καρηταράς δια-  
ματερά, [Μαρητή] πι τηρητάκετην, μηδε ορ φυλακ-  
τεών ερωτά, ρωτής γενιταίης πι γωνιαν ιητητές:  
Συλλαγή μήτε μαρητή, πη διαβαζούμε έτη αγη-  
μηροτερήθην, Ελλάς κι ιητητάκετην Σρητατιρή:

85. Ήνι αποθέωτε ποιητήκε την ηρωική σημασία της εργασίας της γυναικείας φύσης.

<sup>64</sup> *Sh'u dawinjia*, 41:

<sup>65</sup> Բնագրում՝ 'wn: Այս տեղանվան մասին մանրամասն տես՝ մեր սույն աշխատության առաջարկը:

<sup>66</sup> Բնագրում brgry. տե՛ս մեր աշխատության պահարանը:

զինյալ շարքերով շրջապատեցին այն հընձնանոլ:

86. Տրդատն իր ծառամերից մեկին հրամայեց տեսնել, թե որն է այն [կևող] գեղեցկությունը, որին փնտորելու է ոյմել հունաց թագավորն, ասելով, թե նրա նմանը չկա ողջ տիեզերքում:

87. Երբ այդ ծառան տեսավ նրան, ապշեց նրա գեղեցկությունից ու գնաց ասաց Տրդատ թագավորին, թե նրա գեղեցկության նմանը չկա աշխարհի բոլոր թագավորություններում:

88. Այնամայ Տրդատն ասաց այն սուրհանդակին. «Գնա ասս Դիոկլետիանուին, որ չեմ գտել նրան, և եթե գտնեմ, կուղարկեմ իրեն»:

89. Եվ Տրդատը Հոփիսիմեին հոյակապ արքայական հանդերձներ ու մեծաքանակ ուկեղեն ուղարկեց, որպեսզի նա հագնվի, ինչպես նաև ձիեր, որպեսզի նա հեծնի ու գա իր մոտ: Նա հավաքեց իր բոլոր մեծամեծներին և իր թագավորության մարդկանց<sup>67</sup>, որպեսզի իր հետ որպահանան հարսանիքով:

90. Երգաձայնություն, ցանկաւեր պարեր ու զանազան խաղեր կազմակերպեց: Հավաքվեցին հազարավոր ու բրուրավոր մարդիկ և ամբոխալին ցնծության մեջ կոտրեցին իրար:

91. Այն բանից հետո, երբ մատուցվեցին այն նվերները, որոնց մասին խոսեցինք, Քրիստոսի կույսը մերժեց ընդունել նրանք ու չգնաց նրանց հետ: Խակ բոլոր բույրերը Սատուն ուղղված միաձայն աղոթքով ու աղերսանքով ասացին.

92. «Սատված, որ փրկեցիր Նոյին ջըրիներից ու պահպանեցիր նրան տապանի մեջ, պահպանիր նաև քո աղախնին մեղքի ջրիներից»:

93. Սատված, որ պատեցիր Սառային՝ Արքահամի կնոջը, Փարավոնի և Արիմելեքի ձեռքերից, այժմ պատիր նաև քո աղախնին ու հարսնացուն այս անաստված անօրենների ձեռքից:

94. Սատված, որ պահպանեցիր Անահիայի տան մանուկներին հնոցի հրից. և նրանց օգնության ուղարկեցիր հրեշտակին, այժմ պահպանիր նաև քո աղախներին, որոնք պաշտում են քո անունը և քո համար հայածանքի ենթարկվում: Մեզ օգնության ուղարկիր քո հրեշտակին և հալածիր այս զորքը, որը Բարելոնի բոցի նման պաշարել է մեզ:

95. Ինչպես փրկեցիր Դանիելին աղոյուծ-

ների գրում, այնպես փրկիր և մեզ: Եվ ինչպես Նարուգունուտը կորցուեց մարդկային կերպարանքն ու անաստի վերածվեց, մինչև հասկացավ ու գիտակցեց, որ դու ես միակ Աստվածը, այնպես վարվիր նաև այս ապատամի ու հեթանուի հետ, որպեսզի շնորհրտա քո ծառամերի վրա և իմանա, որ դու ես միակ ճշմարիտ Աստվածը»:

96. Եվ այդ պահին նրանց վրա լույս իշխավ ու նրանց մի ձայն հասավ, որն ասում էր. «Լսեցի ձեր աղոթքը, և ինչպես ձեզ ապատեցի ՈՒԻՒՂԵՆԻՒՅԱՆՈՒԻԾ, կազատեմ նաև սրանից»:

97. Հանկարծ հողը ցնցվեց երկրաշարժից, և այն ամբարտավան մարդիկ, որոնք հնկում էին նրանց, ընկան իրենց ձիերից, սաստիկ ահարեկված ու դողլալով:

98. Իսկ դեսպանները, որոնք հվերներ էին բերել, ու դրանք չեն ընդունել Քրիստոսի աղախները, գնացին տեղեկացրին Տրդատին: Եվ նա հրամակեց, որ նա գա ծաղրուծանակով, քանզի չեր համաձայնել գալ պատվով:

99. Հետո նրան բռնեցին բերին Տրդատի պալատը: Երգողներն ու մյուս խաղացողները ցնծում և ուրախանում էին՝ կարծեն հարս տեսած: Խակ Տրդատը, տեսնելով նրան, ապշեց նրա գեղեցկությունից և նրան խոստումներ տվեց՝ իր թագավորության տիրուսին դաշնամուկով: Պատճենու պայմանով:

100. Դեռ նրան բռնեցին բերին Տրդատի քալատը: Երգողներն ու մյուս խաղացողները ցնծում և ուրախանում էին՝ կարծեն հարս տեսած: Խակ Տրդատը, տեսնելով նրան, ապատի աղախները, դիմեց նրան ու ասաց: «Ես Քրիստոս արքային, դիմեց նրան ու խոստումներն ինձ ամենին հան չեն: Ես երես չեմ թեքի իմ Սատուց, որն ատելծել է երկինքն ու երկիրը»:

101. Շատ բռնադատելուց հետո, երբ նա չինազանդվեց, ձեռք ձգեց նրան: Սակայն Սատու աղախները նրանից ստացած զորությամբ, որ բնակվում էր իր մեջ, նրան հրեց դեպի պատը և պատառուեց նրա հանուերձները:

102. Եվ առավոտից մինչև իններորդ ժամը սրբություն տանջելուց հետո, երբ նրա ուժը սպառվեց, ժամը ինը մոտ դուրս եկավ նաև ուտելու ու հանգստանալու:

103. Մինչդեռ երանուուն անձկության մեջ աղոյում և աղերսում էր Սատուն, որ իրեն ազատի նրանից, ինչպես թուշունը որորդի որոգաթից:

104. Տրդատը կանչեց նրա դայակին՝ Գայանեին ու ասաց նրան. «Խնջորում եմ քեզ ասես նրան, որ հնազանդվի մեր թագավորությանը և հակառակություն ցույց շտա մեզ, խակ ես կմեծարեմ նրան, նույ-

<sup>67</sup> Բնագրում լիու ({{որդիներին}}). Մ. վաճ էսքրիլը թարգմանել է les sujets (Բայատակներին):

նիսկ թագուիի կդարձնեմ, քեզ էլ մեծ պատվի կարժանացնեմ»: Գայանեն պատասխանեց նրան, ասելով. «Ես նրան կամեմ այդ բաները և ավելի քան այդ»:

105. Ապա Գայանեն Հոհիսիմեին ասաց հունարեն. «Տես, դուստր իմ, ո՞ւ ես խոստացել պահել քո կուսությունը: Ո՞չ արդյոք Քրիստոս արքային, որն անապական է և որի արքայությունն անանց ու անսպառ է:

106. Նրան՝ ով մեղցնում ու կենդանացնում է, նրան՝ ով յուրաքանչյուրին հասուցում է ըստ իր գործերի: Եվ նրանց, ովքեր կատարում են իր կամքը և ընթանում իր ճանապարհով, ովքեր հապավում են իր համար և հանուն իրեն համբերում տանջանքների ու նեղության,

107. Ես հավերժ կհանգստացնի, կուրախացնի ու վայելքների կարժանացնի իր երկնային արքայության մեջ, նրանց այնպիսի ժառանգություն տալով, որ ականջը չի լսել, մարմնավոր աշքը չի տեսել և մարդու սրտից վեր չի բարձրացել<sup>68</sup>:

108. Եսկ նրանց, ովքեր լրում են նրան և շարժվում իրենց չոր կամքով, ովքեր սիրում են ժամանակավոր կյանքն ու անցողական աշխարհը, անհետացող վայելքներն ու սպասվող որոշությունները, կըտանջի անշեշ գեհենում, խավարի մեջ, որտեղ լուս չկա և որտեղ ոչ որդն է պակասում<sup>69</sup>, ոչ սատանան, որին նրանք հնագաղվել են:

109. Տես, դուստր իմ, մի' սիրիր չարը՝ քարու փոխարեն, և ոչ խավարը՝ լուսի փոխարեն, ոչ էլ սատանային՝ Քրիստոսի փոխարեն, որին դու հարսնացել ես»:

110. Բայց այսուել կար մեկը, որ գիտեր խոսել հունարեն: Երբ նա լսեց այս բաները, դրանք հայտնեց արքային: Եվ նա խփեց նրան քարերով և հրամայեց ջարդելու փշրել Գայանեի ատամները:

111. Գայանեն դարձյալ ասաց առաքին Հոհիսիմեին. «Աստված, որ օգնեց մանուկ Դավթին, մինչև որ նա հայտեց փղշտացի հսկա Գողիադին, նոյն ինքը կօգնի նան քո մասնկությանը, մինչև որ դու հայթես այս անաստված ապատամբին:

112. Նա քեզ կպասկի հայտանակի պատկով: Քանիզ դու տեսար, թե ինչպես փորձության ժամին, երբ աղոթում էինք հնձանում<sup>70</sup>, Աստված ողարկեց իր հրեշտակին,

որը ցնցեց նրանց, ովքեր պաշարել են մեզ, մինչև որ նրանք ընդարմացան ու դարձան մեղյաների պես»:

113. Տրդատը մինչև կեսգիշեր մնաց տանջելու Քրիստոսի աղախնին՝ Հոհիսիմեին, նրան պատրից բազում բաներով, բայց ուժը չպատեց:

114. Արդարի Աստված նրան հայթանակ շնորհեց նրա (Տրդատի) նկատմամբ, քանի որ սա նրա առջև կարծես թոշնակ էր դարձել, թեև, ինչպես նախապես ասացինք, հոյժ զորավոր մի մարդ էր, իսկ նա դեռևս աղջնակ էր: Եվ նա, դժվարություն կրելով նրանից, թողեց նրան:

115. Այնուինեւու երանութին դուրս եկավ, չնկատվելով ոչ ոքի կողմից, և եկավ քաղաքի երկաթյա դարպասի մոտ: Այն բացվեց նրա առջև, և նա եկավ ու մոտ մեկ մղոն հեռացավ քաղաքից:

116. Հետո աղոթքի կանգնեց ու ասաց. «Ի՞նչ մատուցեմ քեզ, Տեր Աստված իմ, ինձ արված բոլոր բարիքներիդ փոխարեն: Ես ոչինչ չունեմ քեզ մատուցելու: Միայն անձն իմ, որ դու ատեղծեցիր, կարող եմ քեզ գոհել»:

117. Երբ պալատականներն իմացան, որ Հոհիսիմեն փախել է, հետապնդեցին նըրան լաւտերներով ու փնտրեցին նրան: Եսկ երբ դարպասը բաց տեսան, ասացին իրար. «Նա կախարդ է»:

118. Հետապնդելով նրան, նրանք հասան նրան, գետնին չորս ցից խփեցին ու նրան կապեցին նրանցից, փորեցին նրա աշքերը, կտրեցին նրա լեզուն ու ձեռքերը, պատուցին նրա որովայնն ու լցորին քարերով և կտրեցին նրա գլուխը:

119. Մեկանուկ կտրելով նրա անդամները, նրանք ասում էին. «Նա է նրանց հատուցումը, ովքեր չեն հնազանդվում թագավորին»: Եվ սուրբ վկան՝ Քրիստոսի աղախնին՝ Հոհիսիմեն, վախճանվեց վկայության նահատակությամբ:

120. Տրդատը հրամայեց խոշտանգել նաև Հոհիսիմեի դայակին՝ Գայանեին, որովհետև նա էր, որ չթողեց նրան կատարել իր կամքը: Նրանք հանեցին նրա լեզուն պարանցից, փորեցին նրա աշքերը և փշրեցին նրա սրունքները: Փշեցին ու մորթագերծ արդն նրան, հանեցին նրա մաշկը, և այսպես հոգին ավանդեց Աստծուն:

121. Նա վախճանվեց վկայության պատկով՝ իր երեք այլ ընկերութիների հետ:

գրչական աղավաղում է տեղի ունեցել. նշան բարդ ամենալ վատահությամբ պետք է ուղղել եռց'ր (հնձանում):

<sup>68</sup> Հմտ. Ա. Կորնթ. Բ. 9:

<sup>69</sup> Հմտ. Ես. ԿԶ. 24. Մարկ. Թ. 47:

<sup>70</sup> Բնագրում եռց'ր (քարայրում. Մ. վան Էս-րուկը համապատասխարար բարգմանել է dans la grotte). Մեզ թվում է, սակայն, որ պատե-

[Տրդատը] նրամայեց քերել նաև մնացած երեսներեքին և արով կոտորեց նրանց: Նաև նրանցից մեկը, որի անունն էր Մանի, գնաց լեռը և բռակվեց քարանձավում:

122. Եվս մեկը նրանցից հիվանդ էր: Նրան թողին այն հնձանում: Եվ նա աղոթում էր ու ասում. «Տեր իմ, ինձ մի՛ զբրկիր ընկերութիւններին հետ մեռնելոց և մի օտարացորու հրանցից: Այլ ընդունիր իմ հոգին նրանց [հոգինների] հետ և արժանացրու ինձ ընկերութիւններին բախտին»:

123. Եվ մինչ նա աղոթում էր, վրա հասան ու սպանեցին նրան: Եվ այդ սուրբ վկարութիւնների մարմինները նետեցին սատկած անասունների դիմակների հետ:

124. Երեք օր հետո Տրդատը հիշեց Հոփիսիմեի գեղեցկությունը և վասլեց նրա սիրուց: Երբ նրան հայտնեցին նրա մահվան մասին, սաստիկ վշտացավ, շարտեց թագն իր գլխից, ո՞չ կերպ, ո՞չ խմեց ու, ողբազով նրա վրա, ասաց. «Նրա հմանը չեմ տեսել ո՞չ հովների մեջ, ո՞չ հայերի մեջ, ո՞չ էլ մի այլ տեղ»:

125. Իսկ նրա մեծամեծները մտան նրա մոտ, ամեն կերպ միտիքարեցին նրան ու ասացին. «Գնանք որսի ու զվարճանանք»: Նրա հմադր պատգարակ քերին, նա նըստեց վրան, և մեծամեծներն ընկերակցեցին նրան:

126. Երբ մեկնեցին, Աստված նրա վրա մի դև ողարկեց. նա ընկալ պատգարակից ու խածառեց իր մարմինը, փոխելով իր մարդկային կերպարանքն ու վերածվելով վարագի:

127. Նա գնաց անտառ և սկսեց արածել Վարագների հետ: Դեկոր տիրեցին նաև նրա բոլոր մեծամեծների ու բոլոր պատկաների վրա, բացի նրա բրոշից ու կնոքից:

128. Նրանք բոլորն էլ խելակորուու ենան և դիվանարների պես դեսուրեն ընկան: Իսկ Տրդատը արածում էր վարագների հետ ու խոտ էր ուսում: Ժամանակ առ ժամանակ նրա գիտակցությունը վերադառնում էր և նա հիշում էր իր թագավորությունը:

129. Այնուհետև ողորմած ու գթասիրու Աստված, որը լուս է իր ծառաների աղոթքը, ովքեր հարաժամ դիմում են նրան, և որը պատժում է յուրաքանչյուրին ըստ իր կամքի, նա՝ ով կենդանացնում է իր սիրով և պատժում իր գթավթամբ, տեսիլքի միջոցով ուղարկեց իր հրեշտակին:

130. Եվ նա ասաց նրա բրոշը. «Դուք չունեք մի այլ բժիշկ՝ թագավորին բուժելու և նրան առաջիւ պես մարդ դարձնելու, ինչպես նաև նրա մեծամեծների գիտակ-

ցությունը վերականգնելու համար, բացի Գրիգորից, որը ծառան է կենդանի Աստծու՝ երկնքի ու երկրի և նրանցում եղած առևտնի իշչը արարչի:

131. Անա նա նետված է վիրապը, Արտաշաս<sup>71</sup> քաղաքի մոտ, քանի որ նրան բազում չարչարակեցներով տանչել ու այնտեղ է նետել Տրդատը, որն այժմ վարագ է դարձել»:

132. Այնամ նրա բույրը կանչեց որոշ մարդկանց, ովքեր պահպանել էին իրենց գիտակցությունը, և ասաց նրանց. «Գնացեք հանեք Գրիգորին Արտաշատ քաղաքի մոտ գտնվող վիրապից, և նա կրութի թագավորին ու նրա բոլոր մեծամեծներին»:

133. Նրան պատասխանեցին, ասելով. «Քո մեջ նոյնպես դև կա, քանի որ դու ասում ես, թե թագավորին ու նրա մեծամեծներին այժմ կրութի մի մարդ, որը շրջապատ ու տանչանքներից զախչախված մարմնով տասներես տարուց ի վեր նետված է խոր վիրապը՝ ի չարաբարու ու մահացու սղունեներով»: Եվ նա լոեց:

134. Մյուս գիշեր տեսիլը հայտնվեց վարագ դարձած Տրդատի կեղծն ու քրոջը, ասելով նրանց. «Գնա քո եղբոր մոտ, քանի ժամանակ առ ժամանակ նրա գիտակցությունը վերադառնում է, և նրան նուշիր ասել իր մեծամեծներից մեկին, որ Գրիգորին հանեն վիրապից, և նա բուժի իրեն»:

135. Գնաց գտավ նրան մի թափուտու արածելիս և ասաց նրան, ինչպես ապած էր իրեն: Նա էլ գլուխը խոնարհեց ի օշան «պո»-ի:

136. Եվ [քուրր] նախարարներից մեկին, որ կոչվում էր Օտա<sup>72</sup>, հրամայեց զորքով գնաց Արտաշատ քաղաք և հանել Գրիգորին վիրապից:

137. Երբ Օտան գնաց ու հասավ Արտաշատ, տեղի մեծավորները նրան ողջունելու եղան և հուրընկալեցին նրան: Տեղեկանալով նրա խնդրին, նրան ասացին. «Նրանից չի մենացել, նույնիսկ հոտը, որովհետև վիրապը բռակեցված է չարաբար կենդանիներով»:

138. Իսկ Օտան, վերցրած չորս երկար պարան, գնաց այդ վիրապի մոտ, դրանք կապեց իրար, նետեց վիրապը, և բարձր ձայնով կանչելով ասաց. «Գրիգոր, Աստծու ծառա, բոլիր, քանզի քո տերն ուղարկել է քո ետևից»:

<sup>71</sup> Բնագրում՝ 'րժ. Բնմտ. M. van Esbroeck, Առ ոսւնեան լետուն, թ. 101.

<sup>72</sup> Բնագրում՝ 'ալ'. Բնմտ. M. van Esbroeck, Առ ոսւնեան լետուն, թ. 103.

139. Ապա նա շարժեց պարանը ներքելից, և հրանք շատ ուրախացան դրանից: Նրան ձորձեր նետեցին, որպեսզի դեմի իր կողերին և վրալից կապի պարանը: Եվ առ արեց այդպէս. պարանը կապեց իր մեջքից ու ցնցեց հրանք համար:

140. Իսկ հրամք ձգեցին և հրան վեր  
բարձրացրին: Եթզ տեսան հրան, երկրպա-  
գեցին հրան, որպահանալով ու զարմանա-  
լով հրա վրա: Նրա մարմինը և աւագել էր:  
Նրան շորեր հաջողին ու զնացին:

141. Տեսնելով նրան, արտաշատցիւերը մեծապես ցնծացին նրա համար ու զարմացան: Խակ երբ նաև առաջի Կաղարշապատ<sup>73</sup> քաղաքը, և քաղաքի բնակչները լոյր առան, նրանք ցնծությամբ ու մեծ ուրախությամբ նրան դիմավորելու ելան:

142. Վարազ Տրդատը հոյնակեն եկավ  
նրա մոտ անստաղից, գլուխը խոնարհելով  
գետին ու երկրպագելով: Այդպես նաև նրա  
բոլոր մեծամեծները, որոնք արտավագում  
էին նրա առաջ:

143. Խակ Քրիստոփ վկան՝ տեր Գրիգոր  
Առաքալակը, աղոթեց և խնդրեց Աստծոց,  
որ վերադարձի ճրանց գիտակցությունը,  
որպեսզի ճրանք հասկանան և ըմբռնեն,  
ինչ որ ճրանց քարոզելու և ուսուցելու  
է քրիստոնյա դատնապատ և ճշմարտության  
հանաշողությանը հասնելու համար:

144. Եվ միշտ նա աղոթում էր, հրաց  
գիտակցություններ անմիջապես վերադարձ-  
ալ, ինչպես նաև լիինում: Տրդափի գի-  
տակցությունը նույնպես վերադարձալ,  
ինչպես անցյալում էր: Եվ խոսում էր մար-  
դու պես, թեև նրա մարմինն ու գլուխը  
մնում էին վարագի: Նա արտահայտվում  
ու արտափում էր սորք Գրիգորի աչքի-  
առաջ և պաղատում էր նրան:

145. Եվ Քրիստոսի վկան՝ Գրիգոր Անհատակը, դիմելով Օրանց, ասաց. «Ուր եք Ձեւեկ այն սուրբ կրոնավորութիւների՝ Քրիստոսի վկաների մարմիւնները»: Խոկ Օրանք ապշեցին ու զարմացան այն բանի վրա, թե վիրապում փակված մարդն ինչպէս է իմացել այդ սրբերի սպանության խասին:

146. Երբ ցուց տվին դրանք, տեսան, որ դիմումները, թեև նետուած, բայց պահպանութեան և ո՞ս պահպանող ո՞ւ պահպ

չունենալը կրանց շէին դիպել: Դրա համար փառ բանեցին Աստծուն և ամրապնդեցին հավատքի մեջ: Նրանցից<sup>74</sup> համեմի բույր էր գալիս, ինչպես մի հրաշալի անուշանուություն:

148. Եվ Քրիստոսի վկան տեղ Գրիգոր, ինքը իր ձեռքերով հավաքեց այդ մարմնաները և, բերելով, իրենց հոսկ հանդերձներով պատահեց դրանք ու տեղադրեց այն հնձանում, որտեղ նրանք ստաց բրնձակում էին:

149. Եվ բոլոր հախարաբներն ու մնացյալ մարդիկ, ինչպես նաև թագավորը, որ վարագ էր դարձել, խնդրեցին Գրիգորի՛ց<sup>75</sup>, ասելով.

150. «Տեր իմ, Աերիք մեզ, որ մենք քեզ ենթարկեցինք բազում շարչանքների և մեր կամքով քեզ կրտսդան մատնեցինք: Բաց Սաստիած քեզ պահպանեց, որ դառնաւ մեր փրկիչը: Արդ, տեր իմ, խնդրիդ քո Սաստում մեզ համար և թագավորին դարձրու ինչպես առաջ էր, ու մենք կհամուսան որ Աստծոն»:

151. Քրիստոսի վկան՝ տեր Գրիգորը,  
Արանց հրամայեց քուրծ հագնել և ծով պա-  
հել: Եվ արեցին<sup>6</sup> այդպես: Թագավորին  
Առյապես, որը վարագ էր դարձել, քուրծ  
հագրին և ամբողջովին ծածկեցին, բացի  
աշքերից: Եվ այդպես, մինչ ևս ուսուցա-  
նում էր Ծոնեա, մենացին մաշտոնենին որ:

152. Նա առաջնորդեց հրանց աշխարհի սկզբավորումից, թե ինչպես Աստված արարեց երկինքն ու երկիրը և հրանցու եղած ամեն ինչ, որոնք տևանելի են կամ աներևույթ, ինչպես՝ մինչ ստեղծեց Սորամին, սատանան նախանձեց հրան, և սրա խորհրդով նա վորավեց դրախտից, ինչպես Սորամն ապաշխարեց<sup>7</sup> իր գործած մեջու համար:

<sup>74</sup> *Thesis on the History of the Chinese Revolution*, p. 10.

75 Բնագրում վրիպմասք տպագրված է *grygwyws*  
և *ցշացաւայս*.

<sup>70</sup> Բնագրում շեմ (արեց), որն, ըստ երևոյթին,  
ական է առանձ հեծու շահու (առանձին)։

<sup>77</sup> Ասորելու բնագիր է տեղական անդամակցությունը՝ Ապաշխարովաց քառականը և Ապաշխարովաց քառականը՝ Ապաշխարովաց քառականը և Ապաշխարովաց քառականը:

153. Եվ թե ինչպես, երբ նոյի օրոք մեղքը շատացավ, Աստված ջրմեղեղ ուղարկեց ու կործանեց բոլոր մարդկանց և բոլոր տեսանելիներին, բացի նոյից ու նրա յուրայիններից և նրանցից, որոնց Աստված հրամանեց նրա մետ մտնել տապանը, և Աստված այդ ժամանակ նրան պահպանեց պատուհանից:

154. Դարձյալ, թե ինչպես դրոշ ժամանակ անց, երբ մարդիկ աճեցին, խորհեցին

մի մեծ աշտարակ կառուցել, որպեսզի դրանով փրկվեն պատուհանից, և ինչպես Աստված խառնեց հրանց լեզուներն ու նըրանց շիրուցան արեց ողջ երկրում:

155. Նաև, թե ինչպես մարդիկ հեթանոսությունն աշխարհ մուծեցին և ամենայնի արարչին փոխեցին մարդկանց ձեռքով գործված կուտքերի արձանների և նման բաների մետ:

(Ժարուհակելի)